

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿԼՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Արագածոտն մարզ Հ.Կարբի 3-րդ փողոց թիվ 1 վարչական շենք հասցեում, ստորև ներկայացնում է **ՀՀԱՄԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/02** ծածկագրով գնանշման հարցման/ 2020 թվականի հունիսի 17-ին կնքված N **ՀՀԱՄԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/02** ծածկագրով գնման պայմանագրում 2020 թվականի սեպտեմբերի 14-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթերի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Աշխատանքների կատարման վերջնաժամկետ :

Փոփոխության նկարագրություն: Աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգել:

Փոփոխության հիմնավորում: 2020 թվականի հունիսի 17-ին կնքված N **ՀՀԱՄԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/02** ծածկագրով գնման պայմանագրի 8.5 և 8.8 կետեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա.Բաղդասարյանին:

Հեռ.՝ +374-44-201-002

Էլ. Փոստ՝ baghdasaryan@inbox.ru

Պատվիրատու՝ Կարբիի Համայնքապետարան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

«17» Հունիսի 2020թ. ԿՆՔՎԱԾ ՀՀԱՄԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/02 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ՑԱՆՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՔԱՅՔԱՅՎԱԾ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

h.Կարբի

«14» սեպտեմբերի 2020թ

«ՀՀ Արագածոտնի մարզի Կարբիի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Կ.Բաղդասարյան -ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Եղվարդշին» ԲԲԸ (հիմք ընդունելով 17 հունիսի 2020թ կնքված պայմանագիրը) , ի դեմս «Եղվարդշին» ԲԲԸ տնօրեն Ս.Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 17.08.2020թ. կնքված N «ՀՀԱՄԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 8.5 և 8.8 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 «ՀՀԱՄԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով Պայմանագրի կատարման վերջնաժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և կատարման վերջնաժամկետ սահմանել 2020թ. հոկտեմբերի 15-ը ներառյալ:

2. Այլ պայմաններ

- 2.1. 17.08.2020թ. կնքված N «ՀՀԱՄԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով կապալային աշխատանքների ձեռքբերման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:
- 2.2 Սույն համաձայնագիրը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:
- 2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կարբիի համայնքապետարան
ՀՀ Արագածոտն մարզ գ.Կարբի
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900442124104
ՀՎՀՀ 05001747
Կարբի համայնքի ղեկավար
Կ.Բաղդասարյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Եղվարդշին» ԲԲԸ
Ք.Երևան, Հր.Քոչար 14
Բանկ՝ «Արդշինբանկ»ՓԲԸ
Աղայան մ/ճ
Հ/Հ 247460003848
ՀՎՀՀ 033002252
Գլխ.Տնօրեն՝ Ս.Վարդանյան

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Ս.Վ

